

ՆՈՒՅՆԱԲԱՂԱԴՐԻՉ ՓՈԽԱՏԵՂՈՒՅԹՆԵՐԻ ՈՃԱԿՄԱՍՏԱՅԻՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայերենում գոյություն ունի բառակազմական մի եղանակ, որի միջոցով բառեր կազմելիս տեղի է ունենում բաղադրիչների դրափոխություն: Եթե բառազույգի մեկ անդամում ունենք $a + b$ բարդությունը, ապա մյուս անդամում կլինի $b + a$ (գիտափորձ - փորձագետ, գեղանկարիչ - նկարչագետ, դեղնակարմիր - կարմրադեղին, դատաքննել-քննադատել, հետախու- այսուհետ, Ամիրխանյան - խանամիրյան, Բերդաձոր - Չորաբերդ ավելի քան 5000 բառ): Լեզվական այս իրողությունը կոչել ենք «փոխատեղույթ» տերմինով:

Բառագիտական տարբեր տեսանկյուններից դիտարկելիս հեշտ է նկատել, որ միևնույն բառազույգի անդամները միմյանցից կարող են ոչ միայն իմաստով կամ կազմությամբ տարբերվել, այլև ունենալ բառային իրենց զանազան ուրիշ հատկանիշները: Իրողությունը հատկապես կարևոր է նույնիմաստ բառանդամների դեպքում, որոնք կարող են լինել հնաբանություն կամ նորաբանություն, սովորական կամ անսովոր, նորօրյա կամ, մշտապես գործածվելով համդերձ, հմաբույր: Կարող են կրկնվել, հաջորդել միմյանց, պատկանելով նույն խոսքի մասին, ունենալ ածանցավորման կամ թեքման տարբեր ակտիվություն, ուրիշ այլապիսի հատկանիշներ: Սույն հոդվածում մենք կանգ կառնենք նույնաբաղադրիչ փոխատեղույթների ոճական առավել տարածված կիրառությունների վրա:

1. Նույն բառիմաստի արտահայտման ձևի թարմացում:

Այս ոճական հմարի հիմքում ընկած է լեզվական այն երևույթը, համաձայն որի բառիմաստը նորովի, ավելի տպավորիչ է հնչում կամ այլ նրբերանգներ է ձեռք բերում ուրիշ հնչյունակազմով և կամ նախորդ հնչյունակազմի մասնակի փոփոխության հետևանքով: Այլ կերպ ասած՝ բառը փոխարինվում է նույնանիշ փոխատեղականով, ինչը հոմանիշների առաջացման ճանապարհներից մեկն է: Այստեղ մեզ հետաքրքրում են նշված ոճական հմարի դրսևորումները նույնաբաղադրիչ փոխատեղույթների միջոցով: Իրոք, բարդության բաղադրիչների հետևառաջության շնորհիվ, եթե իմաստափոխություն էլ տեղի չի ունենում, դարձյալ թարմանում է թե բառը, թե նույն իմաստի ընկալումը: Դիտարկենք իրողությունը նախ արձակ խոսքում: Բերենք հետևյալ երկու օրինակը:

Ս. Կապուտիկյանի «Էջեր փակ գգրոցներից» գրքում հանդիպում է *կետ-նպատակ* զուգադրական հարադրությունը. «Պերեդելկինո գալուս կետ-նպատակը գիրքս ավարտելն էր»:¹

Իհարկե, հեղինակը կարող էր գործածել *նպատակակետ* շատ ծանոթ բառը, բայց հենց այդ «շատ ծանոթ» լինելն էլ չի բավարարել նրան: *Կետ-նպատակ-ը ռնգօժող եղանգ է բերում*: Այս կերպ կարելի է մատնանշել ամենաբազմազան նկատառումներ, որոնք շարժառիթ են դարձել փոխատեղության ճանաչման և նույնիսկ ստեղծման կազմության:

Չափածո խոսքում նույն բառիմաստը թարմ կերպով արտահայտելու միտումը նկատելի է հետևյալ համագամանքում: Բանաստեղծը գործածված փոխատեղական անդամը ոչ վանկերի թվով, ոչ հանգավորման հնարավորություններով չի տարբերվում իր զույգից: Համատեքստից է պարզվում, թե բանաստեղծը կամ թարգմանիչը ինչու է նախապատվությունը տվել բառագույզի տվյալ անդամին: *Ելնել-ընկնել* և *ընկնել-ելնել* զուգադրական բայերից Պ. Սևակի «Անլուելի զանգակատուն» պոեմի հետևյալ հատվածում ընտրված է առաջինը: Քանի որ խոսքը մեղեդու մասին է, նշանակություն է ունեցել *ելևելել* բայի իմաստը, ինչն էլ հենց տվյալ դեպքում արտահայտում է այս զուգադրականը:

Հայ հոգևոր երգը ծով

Ճավալվում էր, թավալվում

Ելնող-ընկնող կոր գծով,²

Առօրյա խոսքում *փորձությունների ենթարկվել* իմաստն արտահայտելու համար սովորաբար գործածում ենք *ընկնել-ելնել* փոխատեղությոյնը, որտեղ նախ պետք է շեշտվի, բնականաբար, ընկնելու մանրամասը (հմտ. *ընկած-ելած*):

Մ. Խերամյանը «Իլիական»-ի թարգմանության մեջ նախ գործածել է *նետ ու աղեղ* վերլուծական բաղիյուսականը, իսկ մի քանի տող ներքև թարմության համար՝ *աղեղ ու նետ* փոխատեղությոյնը: Երկու բառանդամներն էլ բավարարում են յամբի պահանջին:

Այդպես և նա փախավ լալով, *նետ ու աղեղն* այնտեղ թողած:

Լ. Այսպես ասաց, իսկ Լատոնեն հավաքեց իր աղեղն ու *նետ*, ...³

Եթե Դ. Վարուժանն իր «Նեմեսիս» ստեղծագործության մեջ ընտրել է *զենուզարդ* բառը, ապա Վ. Թեքեյանը «Ես երագիս սիրեցի» բանաստեղծության մեջ՝ *գարդուզեն* փոխատեղությոյնը: Առաջինը շեշտում է ռազմականությունը, սպառազեն լինելը: Երկրորդի քնարական հերոսին երագում սպանում են ու սիրում Շամիրամի պես: Սեջբերենք պահանջվող հատվածները:

¹ Կապուտիկյան Ս., Էջեր փակ գգրոցներից, Ապոլոն հրատ., Երևան, 1997, էջ 553:

² Սևակ Պ., Երկերի ժողովածու, Սովետական գրող հրատ., Երևան, 1973, հ. 7, էջ 139:

³ Հոմերոս, Իլիական, ԵՊՀ հրատ., Երևան, 1987, էջ 400:

Անոր կուրծքին կարմրաբորբ՝

Ցայտեցնելով զենուզարդեն պաղպաջուն ճառագայթներ:⁴

Եվ.

Ձարդուզենիդ մեջ պառկած՝

Եվ ճիշտ սրտեղ մետահար ...⁵

Ավելին. թարմ արտահայտչաձև գտնելու համար նույնպես՝ բանաստեղծը կամ թարգմանիչը կազմում են առաջին հայացքից անսովոր, հաճախ միադեպ փոխատեղություններ: Աստղամերձի դիմաց Պ. Սևակի մոտ հանդիպում է մերծաստեղ.

Ո՛չ մի բարձունք մերծաստեղ,

Ո՛չ մի Սասիս, Յիմալայ...⁶

Ի դեպ, Պ. Սևակի երկերում թերևս ամենից շատ են հանդիպում այս կարգի փոխատեղություններ, հատկապես վերլուծական-բաղիյունական բարդությունների տեսքով, և մենք առավել հաճախ օրինակները կբերենք նրա ստեղծագործություններից:

Տես որ իմ մահով քեզ չկործանես.

Սուտ ու փուտ աշխարհ, փուչ ու ոչ աշխարհ:⁷

Հանրածանոթ փոխատեղությային զույգն է՝ *ոչ ու փուչ*: Թվում է՝ հենց վերջինս էլ բանատողում տեղին կլիներ՝ ներքին հանգ ստեղծելով: Բայց հեղինակը, թարմ հնչողության նպատակով, կազմել է իրենը:

Կան նաև դեպքեր, երբ Սևակը փոխատեղություններ է կազմել թե թարմ հնչողության, թե տաղաչափության պահանջներով: Բերենք այդպիսի երկու օրինակ: Մշտապես գործածական *թուղթ ու գիր* բարդության փոխարեն հանդիպում ենք *գիր ու թուղթ*: Ինչպես կերևա ստորև կատարվող մեջբերումից, նպատակը նաև հանգավորումն է եղել:

Սեղան պաչեմ մեկ-մեկ ու ջուխտ,

Որ չբռնի ինձ գիր ու թուղթ:⁸

Իսկ *սառցալուլա* բառի փոխարեն *լուլա-սառույց* զուգադրական հարադրությունը տեղ է գտել նաև բանաստեղծական ոտքի պահանջով:

Ծմակի պես պաղ այդ ծոցում ինչպե՞ս քներ,

Կրակ կողերն ինչպե՞ս հպեր լուլա-սառցին:⁹

⁴ Վարուժան Դ., Երկերի լիակատար ժողովածու, ԳԱ հրատ., Երևան, 1986, հ. 1, էջ 71:

⁵ Թեքեյան Վ., Երկեր, Հայպետհրատ, Երևան, 1958, էջ 164:

⁶ Սևակ Պ., Երկերի ժողովածու, Սովետական գրող հրատ., Երևան, 1972, հ. Ա, էջ 93:

⁷ Սևակ Պ., Երկերի ժողովածու, Սովետական գրող հրատ., Երևան, 1972, հ. Բ, էջ 92:

⁸ Սևակ Պ., Երկերի ժողովածու, Սովետական գրող հրատ., Երևան, 1973, հ. Դ, էջ 101

⁹ Նույն տեղում, էջ 129:

Թարմ արտահայտման քննվող ոճական հնարին դիմելն ավելի զգալի է, երբ բառագույզի երկու նույնաբաղադրիչ փոխատեղությոներն էլ, որոնք այժմ կարող են լինել թե նույնիմաստ, թե տարիմաստ, գործածվում են մի հեղինակի նույն ստեղծագործության մեջ: Անջատվածությունը միմյանցից երբեմն լինում է էջերով, երբեմն՝ մեկ կամ մի քանի տողով:

Վերջին համգամանքը էլ ավելի է շեշտում նպատակը: Ինչպես՝ բաժնեմաս-մասնաբաժին: «Հայրենիքի ծայն»-ի 1982 թ. 16 համարում Գ. Կյուլպենկյանին նվիրված հոդվածում կարդում ենք. «1912-ին ստեղծված թուրքական մավթային ընկերության մեջ 35 տոկոս բաժնեմասը պատկանում էր թուրքական ազգային բանկին»: Քիչ անց հոդվածագիրը դիմում է փոխատեղության. «Բրիտանական կառավարությունը թուրքական մավթային ընկերությանը ստիպեց վերաբաշխել մասնաբաժինները»: Կամ. քիչ թե շատ-շատ թե քիչ: Հանդիպում ենք Գր. Գուրզադյանի «Մի ծաղկի պատմություն» ակնարկում: «Շատ թե քիչ հուսալի տվյալը գիսավորի երևալու պահն էր»: Եվ անմիջապես հաջորդ նախադասության մեջ. «Քիչ թե շատ լուրջ վերլուծությունը թվում էր անհնարին»¹⁰:

Այժմ մի շատ հետաքրքրական օրինակ Սևակի «Անլուելի զանգակատուն» պոեմից, նրա ստեղծագործություններում հաճախ հանդիպող վերլուծական - բաղիյուսական փոխատեղությոներից: Միանգամից միատեղ գտնում ենք երկու բառագույզ, էջեր անց՝ նույն բառագույզերից թարմ փոխատեղությոներ:

Այսպես սրանք երգ ու տաղով, պար ու խաղով

Պիտի հասնեն խնամոնց տուն:¹¹

Եվ ապա.

Ժողովուրդ մի ողջ ... եկավ ...

Իր խաղ ու պարի,

Իր տաղ ու երգի

Կախարդիչ մոգին հրաժեշտ տալու ...¹²

Չարենցի պոեզիայում քննվող խնդրի առումով ամենից հետաքրքրականը նրա հետևյալ փոխատեղության լայն կազմություններն են՝ *հսկավիթխարի* և *վիթխարահսկա*, որոնք հանդիպում են տարբեր ստեղծագործություններում: Հեղինակի նպատակն է այս ածականի իմաստը թարմորեն հնչեցնել: Նախ գործածված են 1920 թ. գրված «Բրոնզե թևերը կարմիր գալիքի» պոեմում.

Հնավանդ, զագիր քաղաքները քար՝

Ցուլերի նման վիթխարահսկա ...

17 տող հետո.

Մեռնող ցուլերի բառաչը վերջին

Կրկեսների մեջ հսկավիթխարի

¹⁰ Գուրզադյան Գր., Տիեզերքը ափի մեջ, Արևիկ հրատ., Երևան, 1987, էջ 33:

¹¹ Սևակ Պ., Երկերի ժողովածու, Սովետական գրող հրատ., Երևան, 1973, հ. 7, էջ 113:

¹² Նույն տեղում, էջ 231:

Փոխվում է կարմիր խնդացող հրի:¹³

Դարձյալ 1920թ. գրված «Դեպի ապագան» պոեմում գործածված է բառազույգի *վիթխարահսկա*, իսկ 1929թ. «Մեծ առօրյա» պոեմում՝ *հսկավիթխարի* անդամը:

Վիթխարահսկա՝ որպես էյֆեյյան աշտարակը մեծ,
... հզոր, բարձրաբերձ,
Կանգնել եմ ամբողջ հասակովս մեկ ...¹⁴

Նա անգամ զգաց, շոշափեց մտքով
Ընթացքը նրա հսկավիթխարի¹⁵

3. Սահյանի ստեղծագործություններում հանդիպում է փոխատեղույթների կիրառության մեկ այլ դեպք՝ արտահայտման թարմացումը երգիծական նպատակով:

Իսկ մեկ այլ «Սպառնալիք» /հիսունամյա սկսնակ գրողի ելույթը երիտասարդ գրողների հավաքում/ երգիծական բանաստեղծության մեջ՝ մեկ քառատողում հանդիպում է մի հազվագյուտ նմուշ՝ փոխատեղույթային երկու բառազույգ՝ *բանաստեղծ* և *ստեղծաբան*, *երգիծաբան* և *բանաերգիծ*: Սիա այդ դիպվածային նորակազմությունները տեքստում.

Ես բանաստեղծ եմ և ստեղծաբան,
Երգիծաբան եմ և բանաերգիծ,
Իզուր եք փորձում փակել իմ ճամփան
Եվ ժողովրդին զրկել իմ երգից:¹⁶

2. Ոճախմաստային նրբերանգներին դիմելը:

Ստեղծագործողը նկատի է առնում այն հանգամանքը, որ որոշ հոմանիշ բառեր ունեն միայն ոճական, իսկ այլ բառեր՝ նաև իմաստային տարբերություններ: Առաջին դեպքին մենք կանդրադառնանք երկու կարգի օրինակով: Նախ նկատենք, որ բառազույգերի մի մասում անդամները, նույնիմաստ լինելով հանդերձ, ունեն գործածության ոլորտային զանազանություններ: Անդամներից մեկը գործածվում է առավել հաճախ, սովոր կերպով, իսկ մյուսը՝ պակաս հաճախ, ավելի բարձր ոճի, հանդիսավոր բնույթի խոսքում: *Հնորհալի* ածականը այսօր առօրյա լայն գործածություն ունի, և դրանով մենք բնութագրում ենք ամենատարբեր՝ թեկուզև ոչ բացառիկ անձնավորությունների, ասելով, օրինակ. *Հնորհալի երաժիշտ, Հնորհալի երեխա, Հնորհալի թամադա, նաև՝ Հնորհալի շարժուձև, Հնորհալի հագնվածք, Հնորհալի խոսելածև*: Այդպես չէ

¹³ Չարենց Ե., Երկերի ժողովածու, Սովետական գրող հրատ., Եր., 1986, հ. 1, էջ 370-371:

¹⁴ Չարենց Ե., Երկերի ժողովածու, Սովետական գրող հրատ., Եր., 1986, հ. 1 էջ 367:

¹⁵ Չարենց Ե., Երկերի ժողովածու, Սովետական գրող հրատ., Եր., 1987, հ. 3, էջ 267:

¹⁶ Սահյան Զ., Երկերի ժողովածու, Սովետական գրող հրատ., Եր., 1984, հ. 1 էջ 355:

բառիս փոխատեղույթը՝ *լիաշնորհ*: Այն գործածում ենք իբրև որոշիչ բացառիկ անձնավորությունների վերաբերյալ՝ խոսքին հանդիսավոր ոճավորում տալով: Ինչպես՝ *լիաշնորհ* գիտնական, *լիաշնորհ* հասարակական գործիչ, *լիաշնորհ* արքեպիսկոպոս: *Լիաշնորհ* մակդիրը կիրառելի չէ առարկաների վերաբերյալ:

Արդեն իսկ գեղեցկորեն բնութագրող *շնորհագեղ* բառի փոխարեն նրա *գեղաշնորհ* փոխատեղույթին դիմելը էլ ավելի վայելչություն է տալիս խոսքին: Ահա թե ինչու է այդպես վարվում Վ. Փափազյանը իր ամբողջապես ոգեշնչված գրված «Հետադարձ հայացք» հուշագրության հետևյալ հատվածում. «Գտա Դուրովին՝ ... հանդիպելու համար նրա եղբոր աղջկան՝ գեղաշնորհ Աննա Դուրովային»:¹⁷

Ննջեցյալներին հիշելիս *լուսահոգի* ասելը հարգալից է հնչում, բայց որքա՜ն ավելի հարգալից ու խոսուն է հնչում դրա փոխատեղական զուգանդամը՝ *հոգելույս*: Վերջինն արդեն գործածվում է ոչ առօրյա, այլ ծանրակշիռ, ոգեշնչված խոսքի մեջ, մեծ երախտավորների, մասնավորապես, բարձրաստիճան հոգևորականների վերաբերմամբ: Ինչպես՝ «Երիցս իրավացի էր հոգելույս Մատթեոս Բ Իզմիրյան կաթողիկոսը ...»:

Հաջորդ կարգի օրինակները վերաբերում են հնաբույր նույնանիշներին: Բառագույգի մի անդամը մեթորյա է՝ կազմությամբ ու նշանակությամբ, մյուսը մատնանշում է անցյալը. կարող է լինել գրաբարածև կամ գրաբարյան բառ: Ահա երկու օրինակ:

Տասնվեցամյա-վեշտասնամյա: Աշխարհաբարին բնորոշ կազմություն ու սովորական գործածություն ունեցողը, իհարկե, առաջին անդամն է /տասնվեցամյա տղա, տասնվեցամյա աշակերտ, տասնվեցամյա երգիչ/: Երկրորդը գրաբարյան կազմություն է. գործածում են անցյալի հետ առնչվող խոսքում՝ պատմական զուգավորում տալու նպատակով: Այսպես՝ Ե. Չարենցը «Խորհրդավոր ընթրիք» նկարին նվիրված իր «Ճիշտ այսպիսի անգույն մի գիշեր» բանաստեղծության մեջ առաջ է քաշում նկարում Հիսուսի նախատիպ-բնորդի հարցը՝ գրելով.

Լեոնարդո դա-Վինչու աշակերտը ...

Ջիովաննի Բելտրաֆիոն վեշտասնամյա:¹⁸

Մայրաքաղաք-քաղաքամայր: Դարձյալ առաջին անդամն է առավելապես միտված դեպի առօրեական, ու ոչ անցյալի հետ առնչվող խոսքը, իսկ երկրորդը՝ դեպի անցյալը: Ուստի ժամանակակից թեմաներում առաջինն է /«մայրաքաղաք Երևանի փողոցների վերանորոգումը», «մայրաքաղաք Երևանի

¹⁷ Փափազյան Վ., Երկերի ժողովածու, Հայպետհրատ, Երևան, 1957, հ. 2, էջ 73:

¹⁸ Ազգ. 12-ը մարտի, 2005:

¹⁹ Չարենց Ե., Սնտիպ և չհավաքված երկեր, ԳԱ հրատ., Երևան, 1983, էջ 245:

մթնոլորտի վիճակը», «մայրաքաղաք Երևանի բնակչության աճը»/։ Բայց այլ է 5-րդ դարի դեպքերը շարադրող պատմավեպում, որտեղ ներդաշնակն արդեն երկրորդ անգամն է։ «Հմայքից զրկվեց նաև քաղաքամայր Վաղարշապատը։ Էլ ի՞նչ քաղաքամայր, երբ արքունիք չկա»։²⁰

Պատմական գունավորումով այսպիսի փոխատեղությունները, ինչպես նշվեց, միաժամանակ կարող են տեղ գտնել նաև հանդիսավոր կամ ոգեշունչ խոսքում։ Սիամանթոն իր «Նավասարդյան աղոթք առ դիցուհին Անահիտ» բանաստեղծության մեջ այս միտումով նախապատվությունը տվել է վեշտասնամյա բառին։

Եվ վեշտասնամյա աղջիկներ բազմինիդ շուրջ պարի ելած

Իրենց մարմինը մոգական թող քեզ բաշխեն ...²¹

Նույն կերպ Վ. Պավլյանն իր «Անք սիրո և սրի» պոեմում գործածել է քաղաքամայր։

Երեք փոշեթաթավ ու հոգնաբեկ գուսան՝

Ուսերն ի վար երեք արծաթալար փանդիո,

Քաղաքամայր մտան հանդիսաքայլ

Ողջույն առաքելով ամենեցուն,

Ինչպես գուսանաց է օրեն ու կարգ։²²

Թեև տաղաչափական կանոններն արգելք չէին մայրաքաղաք բառին, այդուհանդերձ, հեղինակը նախընտրել է նրա զույգը, որը համահունչ է թե 4-րդ դարի պատմվող դեպքերին, թե՛ ստեղծագործության հանդիսաքայլ առաջ ընթացող տողերին։

Փոխատեղությունների իմաստային նրբերանգների հիման վրա կառուցած խոսքի դասական օրինակ է տվել հայ գրականության մեջ կրկնությունների ու հարակրկնությունների մեծագույն վարպետ Հ. Սահյանը։ 1971 թ. հունիսի 26-ին գրած իր «Միանգամից ...» բանաստեղծության մեջ՝ նվիրված Պ. Սևակին, նա բուն ասելիքը ձևակերպել է հետևյալ հարադիր բայերում. պրծնել գնալ, 1. Վերջացնել։ 2. Հարցը փակվել, վերջը գտնել։ Գնալ պրծնել - Ազատվել, փրկվել։ Մեքերերենք համապատասխան հատվածը.

Ասում են՝ «պրծավ գնաց»,

Ասում են՝ «գնաց պրծավ»։

Պարույր Սևակը չպրծավ գնաց,

Պարույր Սևակը գնաց չպրծավ։

Դեռ ապագան է Պարույր Սևակը։²³

²⁰ Խաչատրյան Հ., Քերթովդահայրը, Սովետական գրող հրատ., Երևան, 1985, էջ 12։

²¹ Մարգարիտներ հայ քնարերգության, Հայաստան հրատ., Երևան, 1974, հ. 2, էջ 272։

²² Պավլյան Վ., Լույսն իբրև հաց, Սովետական գրող հրատ., Երևան, 1980, էջ 145։

²³ Գրական թերթ, 26-ը հունիսի, 1971։

3. Ասածի ընդգծում: Փոխատեղությանը օգտագործվում են անձերի, նաև առարկաների բուն էությունը, գլխավոր հատկանիշը ընդգծելու համար: Ռճական այս հնարին դիմելու կիրառական առանձնահատկությունն այն է, որ բառագույզի երկու անդամն էլ մշտապես գործածվում են համատեղ՝ առարկան կամ գործողությունը թե այս, թե՝ մեկ այլ կերպ բնորոշելու նպատակով: Կարելի է ցույց տալ այսպիսի ընդգծման երեք դրդապատճառ:

ա. Առարկայի ունեցած երկու անվանումների հիշատակում: Անվանումները փոխատեղությունը են. երկուսն էլ պետք է ներկայացվեն՝ առարկան սպառիչ կերպով բնութագրելու համար: Ինչպես. *ատամնաշրթնային* և *շրթնատամնային*: [Վ-ն ու ֆ-ն *ատամնաշրթնային* կամ *շրթնատամնային* հնչյուններ են]: *Անվանաբայական և բայանվանական*. «Անվանաբայական կամ բայանվանական ստորոգյալը բաղկացած է որևէ անվանական տարրից՝ մասից և բայական մասից»:²⁴ *Ծիրկաթին* և *Կաթնծիր*. «Հարդագողի ծանապարհը /*Կաթնածիրը*, *Ծիրկաթինը*/ առնչվում է Վահագն Վիշապաքաղի հետ»:²⁵

բ. *Եւթյան լրիվ ցուցահանում*: Խոսողը բառագույզի մեկ անդամով կատարում է բնորոշումը, սակայն դա բավարար չհամարելով, դիմում է բառագույզի երկրորդ անդամին՝ *Եւթյանը* հակառակ կողմից մոտենալու ցանկությամբ: Այս կերպ Վ. Պետրոսյանը «Սենավոր ընկուզենին» վեպում բնակիչների կողմից լքված, ամայի դարձած լեռնային գյուղը բնորոշում է մեջբերվող հատվածի հետևյալ փոխատեղությով. «*Գերեզմանագյուղ*։ Կամսարյանը շանթահար եղավ այդ բառից ... գերեզմանագյուղ, այսինքն՝ գյուղ-գերեզման ... գերեզման, որտեղ գյուղ է թաղված ...»:²⁶ «Բանբեր» թերթի թղթակիցը դիմել է փոխատեղության բառագույզի՝ երգիծական ու հեգնական դիտավորությամբ՝ ցույց տալու Հեյդար Ալիևի անմիտ համառությունը. «Արցախի կենդանական ամենահամառ ներկայացուցչի հաստակողությամբ /կամ կողահաստությամբ/ Ալիևը հավատացնում է, որ նա երաշխավորում է դարաբաղցիների անվտանգությունը, եթե ընդունեն Ադրբեջանի գերիշխանությունը»:²⁷

Ա. Այվազյանի «Սատանայի օգնությունը» պատմվածքում գործող անձերից Ակոփը բացահայտում է, որ իր երեխայի իսկական հայրը Լադոն է: Այդ բացահայտումը հեղինակը ամրապնդում է աչքերի գույնը ցույց տվող փոխատեղությով. «Ակոփը տեսավ ... Զաբելը մտավ Զախալ Լադոյի արհեստանոցը ... Ակոփի երեխայի աչքերը կապույտ-կանաչ էին, Լադոյի աչքերը՝ կանաչ-

²⁴ Պետրոսյան Գ., Հայերենագիտական բառարան, Հայաստան հրատ., Եր., 1987, էջ 547:

²⁵ Կարագեղոզյան Յով., Սեպագիր տեղանուններ, Մագաղաթ հրատ., Եր., 1998, էջ 286:

²⁶ Գարուն, N 7, 1980:

²⁷ Բանբեր, 10, 1995:

կապույտ էին»:²⁸

գ. Գործողության շարունակական կատարում: Երբ խոսողը դիմում է բառագույզի մի անդամին, այդ մշանակում է, որ գործողությունը կատարվել է մեկ անգամ: Հոլմի. Թումանյանի «Սասունցի Դավիթ» պոեմում Դավթի խոսքից, թե՛

Դավիթ գող-գող եկավ, գընաց ...²⁹

երևում է, որ գործողությունը մեկ անգամ պիտի կատարվեր. Դավիթը պետք է գար, ջարդեր Մարա գորջը ու գնար:

Բայց երբ խոսքի հեղինակը ամփոփապես դիմում է նաև բառագույզի երկրորդ անդամին, այդ արդեն ցույց է տալիս, որ գործողությունը կրկնվում է երկու կամ շատ անգամ, նույնիսկ շարունակական է: Այսպես է Հակոբ Մնձուրու «Մախտո» պատմվածքում: Գործող անծանցից մեկը պարտք է վերցրել մյուսից. բայց դրա համար հարկ է եղել շատ անգամ գնալ ու գալ, որպեսզի համոզի փողը տալու: «Այս էգիկը գնաց-եկավ, եկավ-գնաց, գերեցավ, չդիմացա՛ տվի: Վեց տարի կըլլա, այդ պարտքս պիտի տա դեռ»:³⁰ Հ. Մնձուրու նույն ժողովածուի մեկ այլ՝ «Եմիրիկյանի փուռը գնաց» պատմվածքում փոխատեղույթը ցույց է տալիս, թե ինչպես է հարբածին թվում, որ երևույթը կրկնվում է: «Խնջույքին երկրորդ մասը՝ ճաշը սկսավ: ... Գինիին մակընթացությունը անդադար բարձրացավ: Լեռները սկսան ելլել ու իջնալ, իջնալ ու ելլել»³¹: Գ. Նժդեհն իր «Լեռնահայաստանի գոյամարտը» հոդվածում հենց այս ոճական հնարին է հարմար գտել դիմելու՝ բնութագրելու համար աշխարհագրական կտրտվածությունը, որի պայմաններում գործել է ու պայքարել, որովհետև. «Սյունիքի տեղագրությունը այդ երկրում շարժվողից անվերջ բարձրանալ ու իջնել, իջնել ու բարձրանալ է պահանջում»:³² Եվս մեկ օրինակ: Հ. Սահյանի «Ու ես եկա» բանաստեղծության մեջ ընտանիքի անդամները կարծիքներ են հայտնում, թե նորածինն ապագայում ինչ է դառնալու: Պապը՝ թե «տան սյուն կլինի», տատը՝ «մի ավելորդ բերան», հայրը՝ «հոտաղ»: Ահա այս երկար խոսքուգրույցը և արդյունքը նկատի ունենալով՝ հեղինակը գրում է.

Առան-տվին, տվին-առան,
Ու ոչ մեկը գլխի չընկավ,
Որ աշխարհի կանաչ-կարմիր
Երազների ետևն ընկած
Երկու ոտ էլ ավելացավ:³³

²⁸ Այվազյան Ա., Դիպլիպիտո, Սովետական գրող հրատ., Երևան, 1985, էջ 14:

²⁹ Թումանյան Հ., Երկերի ժողովածու, Հայաստան հրատ., Երևան, 1969, հ. 1, էջ 169:

³⁰ Մնձուրի Հ. Երկերի ժողովածու, Սովետական գրող հրատ., Երևան, 1986, էջ 155:

³¹ Նույն տեղում, էջ 289:

³² Նժդեհ Գ., Երկեր, Արխիվային գործի գործակալության հրատ., Երևան, 2002, հ. 2, էջ 22:

³³ Սահյան Հ., Երկերի ժողովածու, Սովետական գրող հրատ., Երևան, 1984, հ. 2, էջ 108: